

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԴԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Նաիրա Սաֆարյան

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Այսօր սոցիալական տեխնոլոգիաները ծառայում են որպես տեղեկատվության ստացման և տարածման ինտենսիվ ռեսուրս: Դրանց օգտագործումը թույլ է տալիս ոչ միայն ուսումնասիրել և կանխատեսել հասարակության տարբեր շերտերում տեղի ունեցող տարբեր սոցիալական փոփոխությունները, այլև ակտիվորեն ազդել գործնական կյանքի վրա, ստանալ արդյունավետ կանխատեսելի սոցիալական արդյունք¹:

Տեղեկատվության աճով պայմանավորված՝ հասարակության արմատական փոփոխությունների մասին առաջին անգամ խոսվել է դեռևս 20-րդ դարի կեսերին: Այդ ժամանակ շրջանառության մեջ դրվեց «տեղեկատվական հասարակություն» (information society) եզրույթը, որը ոչ այնքան իրականության բնութագրում էր, որքան կանխատեսում: Հետագա տասնամյակներում, համակարգչային ու թվային տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվության ծավալի աճի հետևանքով ավելացան նաև սոցիալական իրականության ուսումնասիրությունները:

Տեղեկատվական հասարակության էությունն ու սոցիոմշակութային գործառույթները բացահայտելու համար անհրաժեշտ է հասկանալ «տեղեկատվական հասարակության» ձևավորման և զարգացման դինամիկան, սոցիալական նոր ինքնության ձևավորման առանձնահատկությունները:

Տեղեկատվական հասարակության զարգացման մեջ առանցքային տեղ ունի համացանցը: Այն աշխարհի տեղեկատվական դաշտում աներևակայելի արագությամբ ամրապնդում է դիրքերը: Տպագիր մամուլը և տեղեկատվության փոխանցման այլ միջոցները

¹ Осипов Е.М., Социальные технологии в межсекторном взаимодействии // Вестник Московского университета. Сер. 21, Управление (государство и общество), 2005, № 4, с. 94–110.

այդ թվում հեռուստատեսությունը, իրենց դիրքերը զիջում են համացանցին:

Նախքան սոցիալական ցանցերի դերին և ազդեցությանը անդրադառնալը՝ հարկ է դիտարկել զանգվածային լրատվության միջոցներն այդ համատեքստում: ՋԼՄ-ը լրատվական տեխնոլոգիաների ամբողջությունն է, որը զանգվածային հաղորդակցության միջոցով իրականացնում է տարատեսակ տեղեկատվության տարածում (թերթեր, հեռուստատեսություն, ռադիո, ինտերնետ և այլն) մեծ զանգվածների և նպատակային լսարանների համար²:

Սոցիալական ինքնության ձևավորման համար տեղեկատվական հասարակության մեջ օգտագործվող տեխնոլոգիաներից կարելի է առանձնացնել սոցիալական ցանցերը:

Առաջին անգամ «սոցիալական ցանց»³ (social network) տերմինը հանդիպել է բրիտանացի սոցիոլոգ և մարդաբան Ջ. Բարնեսի մոտ: Ներկայումս սոցիալական ցանցերի թիվը գնալով ավելի է աճում: Դրանք կարելի է դիտարկել որպես երևույթ, որոնք ունեն ազդեցություն հասարակական կարծիքի և վարքի վրա: Եվ որքան դրանց ազդեցությունը մեծանում է, այնքան ավելի մեծ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել դրանց բովանդակությունը և ուղղվածությունները:

Վերջին տարիներին սոցիալական ցանցերը գտնվում են գիտական հանրության և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սոցիալական ցանցերի միջոցով կարող են լուծվել մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ՝ սոցիալական հարցումների արագ իրականացումը, արդիական տեղեկատվության հասանելիության խնդիրը թիրախավորված լսարանների համար և այլն: Ջանգվածային հաղորդակցության շատ խնդիրներ լուծվում են հենց սոցիալական ցանցերի միջոցով, քանի որ դրանք առանձնանում են իրենց հասանելիությամբ, օգտագործման պարզությամբ, տեղեկատվության օպերատիվ տեղադրմամբ, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման հնարավորությամբ:

² Frolov I. T., Philosophical Dictionary, 5th ed., M., Politizdat, 1986, 590 pp.

³ Barnes J., Class and Committees in a Norwegian Island Parish // Human Relations, 1954, № 7, p. 39-58.

Այսօր սոցիալական ցանցերը հանդիսանում են համընդհանուր հանրային հարթակ, որը ծառայում է և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ հաղորդակցմանը:

Սոցիալական ցանցերի գերիշխումը համացանցում և ընդհանրապես մեդիա-ոլորտում հանգեցնում է տեղեկատվական միջավայրի ավելի մեծ փոփոխությունների ու դրա հետևանքով առաջացած գործընթացների⁴: Նախկինում ինտերնետային համակարգում բավականին զգալի էին որոնողական համակարգերի դերը և դրանցից առավել օգտվելու միտումները: Ներկայումս կարելի է ասել, որ այդ որոնողական համակարգերը փոքր-ինչ զիջում են իրենց տեղը սոցիալական ցանցերին: Հետզհետե մեծանում է սոցիալական ցանցերից տեղեկատվության ստացման տեղեկացը:

Սոցիալական ցանցերի դերի աճը հանգեցնում է նրան, որ փոխվում է ինտերնետում տեղեկատվության տարածման տրամաբանությունը: Դեռևս մի քանի տարի առաջ տեղեկատվության մի քանի հիմնական աղբյուր կար, ներառյալ կայքանշաններով, ընկերների հղումներով կայքին անցումները, թեմատիկ ֆորումների հղումները, գովազդային հղումները: Սակայն հիմքերի հիմքը որոնման համակարգերն էին, որոնց օգնությամբ միջին օգտվողը տեղեկատվություն էր գտնում համաշխարհային ցանցում⁵:

Ինֆորմացիայի անվերջ մեծացումը համացանցում, տեղեկատվության աղբյուրների հսկայական և անընդհատ աճող քանակությունն անհրաժեշտություն դարձրին որոնման համակարգերի գոյությունը: Սակավ հայտնի կայքերի համար որոնման համակարգերն այցելուներ ստանալու գրեթե միակ աղբյուրն էին: Սոցիալական ցանցերի դարաշրջանի սկիզբը ցույց տվեց, որ տեղեկատվության աղբյուրների որոնման մեջ նույնպես խորքային փոփոխություններ են տեղի ունենում: Այցելուների հսկայական թվաքանակ դադարել է օգտվել որոնման համակարգերից հրատապ տեղեկատվություն որոնել, այսինքն՝ այն տեղեկատվությունը, որը հաղորդում է հենց մամուլը: Եթե դիտարկելու լինենք առցանց ՁԼՄ

⁴ Տես՝ Մարտիրոսյան Ս, Սոցիալական ցանցերի դարաշրջանը. Փոփոխություններ տեղեկատվական դաշտում, http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=6249

⁵ Մարտիրոսյան Ս, Սոցիալական ցանցերի դարաշրջանը. Փոփոխություններ տեղեկատվական դաշտում, «Գլոբուս Ազգային անվտանգություն», թիվ 6, 2011:

ուրրտը, ապա այստեղ հավանաբար ազդեցության համար պայքար է սկսվել դրոնման համակարգերի և սոցիալական ցանցերի միջև:

ԶԼՄ ուրրտում, հասկանալի պատճառներով, օգտվողների մի մեծ թվաքանակ մշտական ընթերցող է հանդիսանում և միջնորդների կարիք չունի կայքին անցնելու համար: Միննույն ժամանակ, սոցիալական ցանցերն էլ ավելի լուրջ գործոն են դառնում ընթերցողներ ներգրավելու իմաստով:

Որոնման համակարգերի ազդեցության նվազումը և սոցիալական ցանցերի դերի մեծացումը կապված են ինչպես ինտերնետում զարգացման ընդհանուր միտումների, այնպես էլ մի քանի պլատֆորմների ի հայտ գալու հետ, որոնք գրեթե մենաշնորհային դիրքեր ունեն օգտվողների շրջանում: Ցանցում առավել էական դիրք է զբաղեցնում Facebook-ը⁶: Սոցիալական այս ցանցում ավելի քան 800 մլն ակտիվ օգտվող կա, որոնց գրեթե կեսն ամեն օր կայք է մտնում⁷:

Այս ամենի համատեքստում փոխվում է նաև սոցիալական ցանցից օգտվողի մտածողությունը և հոգեբանությունը: Եթե նախկինում օգտատերերի մեծամասնությունը վերջին իրադարձությունների մասին նոր տեղեկատվություն գտնելու համար պետք է որոներ որոնման համակարգերում կամ կարդար տարբեր թեմատիկ միջոցառումների համակարգում, ապա այսօր սոցիալական ցանցից օգտվողների մեծ մասը տեղեկատվության պասիվ սպառողի դերին է անցել, քանի որ տեղեկատվությունը, որը նրան անհրաժեշտ է նաև տարածվում է սոցիալական ցանցերի միջոցով: Օգտվողն արդեն ինքը չի սփռում տեղեկատվությունը. նա վստահում է այն փոքրամասնությանը, որը նույնպես սոցիալական ցանցերում օգտատեր է:

Ինֆորմացիայի և նորությունների անընդհատ ավելացումն ու թարմացումը զգալի ժամանակ են պահանջում օգտվողից, որպեսզի վերջինս կարողանա գտնել իրեն հետաքրքիր նյութը: Համապատասխանաբար, ուժեղանում է օգտվողների այն աննշան ակտիվ զանգվածի դերը, որն ի վիճակի է գտնել և տարածել տեղեկատվությունը: Միննույն ժամանակ, կարելի է նշել, որ այս

⁶ Նույն տեղում:

⁷ Տես՝ <https://newsroom.fb.com/>

միտումը վերաբերում է նորությունների անընդհատ հոսքին, բայց ոչ հիմնական տեղեկատվությանը, որն օգտվողները շարունակում են փնտրել որոնման համակարգերի միջոցով:

Այս շղթայական գործընթացներն իրենց վառ արտահայտությունն են ստանում հայ հասարակության վերջին իրադարձությունների խորապատկերին, որտեղ սոցիալական ցանցերը զգալի նշանակություն ունեցան հասարակությունում տիրող իրավիճակի մասին իրազեկման, տեղեկատվության ինտենսիվ տարածման վրա: Սոցիալական ցանցերի միջոցով գրեթե բոլորը կարողանում էին ակտիվ մասնակցություն ունենալ, հետևել իրադարձություններին, վերջին և ամենաթարմ նորություններին կարողանում էին ծանոթանալ օնլայն և ուղիղ հրապարակումներից (live videos): Այդ ակտիվությունը սոցիալական ցանցերն ապահովում էին ոչ միայն Հայաստանի բնակիչների, այլ նաև սփյուռքի մեր հայրենակիցների համար: Դա ուներ իր մի շարք դրական կողմեր, քանի որ տեղեկատվությունը չէր անցնում տարբեր լրատվական կայքերի պրիզմայի միջով, և օգտատերը կարողանում էր ինֆորմացիա ստանալ առաջին դեմքից՝ առանց որևէ ձևախեղման և փոփոխությունների: Սոցիալական ցանցերի միջոցով տարածվող տեղեկատվությունը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի՝ առանց որևէ լրացուցիչ ջանքերի և դժվարության:

Հեղափոխական շարժումը շատ լուրջ կախված էր համացանցից և սոցիալական ցանցերից: Տարբեր սոցցանցային տեխնոլոգիաներն ունեցան լրջագույն ազդեցություն հասարակական և քաղաքական գործընթացների վրա: Նշենք մի քանի կարևոր գործոն. ամենամեծ ազդեցությունն ունեցան Ֆեյսբուքն ու ՅուԹյուբը: Ֆեյսբուքն արդեն մի քանի ամիս է, ինչ դարձել է առաջնային սոցիալական ցանց Հայաստանում, վերջապես անցնելով լսարանով տարիներ շարունակ Հայաստանում թիվ մեկ սոցցանց Օդնոկլասնիկին⁸:

Հարկ է նշել, որ ուղիղ ֆեյսբուքյան եթերները փաստացի ինստիտուցիոնալիզացվեցին, դարձան վարչապետի և կառավարության այլ անդամների՝ հանրության հետ շփվելու միջոց, ինչն ինքնին աննախադեպ երևույթ է Հայաստանի համար, ուր վաղուց ի վեր պրակտիկա էր դարձել նույնիսկ մամուլի հետ շփումը մինիմա-

⁸ Տես՝ <http://theanalyticon.com/?p=10669>

լիզացնելը և ինչը նաև աննախադեպ երևույթ է նույնիսկ միջազգային պրակտիկայում:

Այսպիսով՝ սոցիալական ցանցերը նպաստում են չմիջնորդավորված և արագ ինֆորմացիայի տարածմանը: Դրանք հնարավորություն են ընձեռում յուրաքանչյուր օգտատիրոջ ինքնուրույն ձևավորել սեփական տեղեկատվական տիրույթի բովանդակությունը և միաժամանակ հանդիսանալ դրա ակտիվ տարածողը: Եվ վերջինիս գործունեությունը դառնում է համահավասար ինֆորմացիա ստեղծողի գործառույթներին:

ԱՍՓՈՓՈՒՄ

Սոցիալական ցանցերը հանդես են գալիս որպես տեղեկատվական քաղաքականության իրացման գործիք: Դրանք աստիճանաբար ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում համացանցում և դրանից դուրս տեղեկատվական դաշտի ձևավորման վրա: Հայաստանում սոցիալական ցանցերը ոչ միայն հաղորդակցման, այլ նաև տեղեկատվության փոխանցման և ստացման կարևոր գործոն են հանդիսանում: Ներկայումս դրանք նշանակալի ազդեցություն ունեն հասարակական իրականության մեջ տեղի ունեցող իրադարձությունների վրա:

Բանալի բառեր՝ սոցիալական ցանց, համացանց, տեղեկատվական համակարգ, սոցիալական փոփոխություններ, զանգավածային լրատվության միջոցներ:

РОЛЬ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ В ИНФОРМАЦИОННОЙ СИСТЕМЕ

Наира Сафарян

*младший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

Социальные сети являются инструментами для реализации информационной политики. Они постепенно становятся более влиятельными в Интернете и в формировании информационного поля за его пределами. Социальные сети являются важным фактором не только для общения, но и для передачи и получения информации. В

настоящее время они оказывают значительное влияние на события, происходящие в общественной жизни.

Ключевые слова: социальная сеть, интернет, информационная система, социальные изменения, средства массовой информации.

THE ROLE OF SOCIAL NETWORKS IN THE INFORMATION SYSTEM

Naira Safaryan

*Junior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Social networks are tools for realization of information policy. Gradually they become more influential in the Internet and in the process of formation the information field in general. In Armenia the social networks are an important factor not only for communication, but also for the transferring of information. Currently they have a considerable impact on the on going events in the social life.

Key words: social network, Internet, information system, social changes, mass media.

ԹՎԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Աննա Պողոսյան

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

Թվային հասարակությանը բնորոշ հասկացությունների հիմնական սահմանումների և տարրերի մեկնաբանության անհրաժեշտությունն առաջանում է, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ունի իր սոցիալական ազդեցության յուրահատկությունները: Թվային հասարակության նոր տարրերի առաջացումը կապված է թվային հեղափոխության ժամանակաշրջանի հետ և սկիզբ է առնում 1950-ականներից, երբ առաջին քայլերն էին արվում դեպի թվային ոլորտ: Այն իր տրամաբանական ավարտին հասավ 1970-ականներին՝